

վերարծարծվում և իմաստավորվում են նորովի: «Գավառական գրականություն» հասկացության մեջ այժմ ավելի խոր ու ընդարձակ բովանդակություն է դրվում. խոսքը վերաբերում է ազգի հոգևոր կարողությունների, դրանց ինքնատիպ հատկանիշների առավել ամբողջական ու լիարժեք արտահայտությանը: «Վաղվան գրականության» շուրջը ծավալված բանավեճի օրերին դա դեռևս ծրագիր էր, քանի որ գավառական շարժման գաղափարախոսները շատ քիչ գրական նյութ ունեին ձեռքի տակ: 10-ական թվականներին արդեն բավականաչափ ստեղծագործական փորձ ու գրական նյութ էր կուտակվել, որ թույլ էր տալիս կատարել ավելի վստահ տեսական ընդհանրացումներ: Բանախոսներն օգտվում են այդ հնարավորությունից՝ Զարդարյանի ստեղծագործության օրինակով բնորոշելով «գավառական» գրականության զարգացման մի նոր, առավել բարձր աստիճանը:

Հ. Սիրունի 1890-ական թվականներին սկիզբ առած արևմտահայ գրական վերածնության շարժման մեջ նկատում է երկու տիրապետող ուղղություն. մեկը՝ «պատվաստը վերածնվող հայ գրականության» քաղում էր եվրոպական մտքից, մյուսը՝ «ցեղին երակներեն»։ այս երկրորդ ուղղությանն է հատկացվում նաև Ռ. Զարդարյանի ստեղծագործությունը: Սիրունու ստորաբաժանման մեջ էականն այն է, որ նա դրանով համազգային նշանակություն էր տալիս «գավառական գրականությանը»: Դա վերջինիս նկատմամբ արևմտահայ քննադատության նոր վերաբերմունքի արտահայտություններից մեկն էր:

Այդ նոր վերաբերմունքը մեկ այլ դրսևորում է գտնում Զ. Եսայանի տեսակետներում: Խոսելով մասնավորապես «Ցայգալույսի» այն էջերի մասին, որոնք ներկայացնում են գյուղական կյանքի հարազատ պատկերներ, բանախոսը նկատում է, որ դրանք «ըլլալով հանդերձ գավառի բարքերու հստակ պատկերներ դուրս կ'ելլեն իրենց շրջանակներեն. անոնց ներշնչված կյանքը կը թևավորվի, անսահմանորեն կ'երկարաձգվի, կ'ստանա երաժշտության ու բանաստեղծության թելադրիչ տարտամությունը և դադրելով ըլլալե այսինչ մարդուն կամ այսինչ դեպքին հոգեկան մեկ նկարագրությունը, կ'ըլլա մարդուն և դեպքերուն անսահմանելի արտահայտությունը»: Սա նշանակում է, որ «գավառական» գրականությունը իր լավագույն էջերով հայ ազգային ոգու հարազատ արտահայտությունն է ոչ միայն իր նյութով ու